ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՄՈՒՐԱԴՅԱՆ ՆԱՐԵԿ ՄԻԽԱՅԻԼԻ

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ-ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ 1922-1936 թթ.

Է. 00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-2017

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ պատմական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր Մինասյան Է. Գ.

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ պատմական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր Վիրաբյան Վ. Հ.

պատմական գիտությունների թեկնածու,
դոցենտ Գևորգյան Է. Գ.

Առաջատար կազմակերպություն՝ Վանաձորի Հ. Թումանյանի անվան
պետական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2017 թ. հուլիսի 18-ին, ժամը 14^{00}-ին ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում գործող ԲՈՀ-ի Հայոց պատմության 004 մասնագիտական խորհրդում (հասցե՝ 0019, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2017 թ. հունիսի 16-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ՝ Մուրադյան Հ. Ղ.

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության գիտական նշանակությունն ու արդիականությունը: Հայաստանի Հանրապետության սահմանների և տարածքների հիմնախնդիրն ունի չափազանց կարևոր նշանակություն և ներկայումս էլ չի կորցրել իր գիտական ու արդիական նշանակությունը: Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի ազգային խնդիրների շարքում առաջնային տեղ են զբաղեցրել սահմանային-տարածքային խնդիրները: Ներկայիս Հայաստանի Երրորդ Հանրապետության սահմանները հիմնականում ձևավորվել են 1920-1930-ական թվականներին, ուստի այս ժամանակահատվածում տեղի ունեցած սահմանային տեղաշարժերի, հարևան պետությունների՝ Վրաստանի և Ադրբեջանի հետ ունեցած տարածքային վեճերի բազմակողմանի ուսումնասիրությունը և անկողմնակալ վերլուծությունը՝ դրանից բխող եզրակացություններով, այսօր էլ առավել քան այժմեական են և հրատապ, քանի որ ներկայումս էլ Հայաստանը, Վրաստանը և Ադրբեջանը ունեն տարածքային խնդիրներ, և դրանց կարգավորման ուղղությամբ անցյալի փորձը կարող է օգտակար լինել անցյալի սխալները այսօր չկրկնելու համար:

Ներկայումս Հայաստանը, Վրաստանը և Ադրբեջանն առանձին հանրապետություններ են և դաշնային կապերի մեջ չեն գտնվում, ինչն էլ ավելի է բարդացնում տարածքային հարցերի կարգավորման ուղիները, և կարծում ենք, այս փուլում անցյալի փորձը կարող է օգտակար լինել, եթե հաշվի առնենք, որ նրանց միջև առկա հակամարտություններն որոշակի ընդհանրություններ ունեն ուսումնասիրվող ժամանակաշրջանում տեղի ունեցած իրադարձությունների հետ:

Վերը նշված փաստարկներով էլ փորձել ենք հիմնավորել մեր կողմից ուսումնասիրության առարկա դարձած թեմայի գիտական նշանակությունն ու արդիականությունը:

Ատենախոսության գիտական նորույթը: Ատենախոսության գիտական նորույթն այն է, որ աշխատանքում փորձ է արվել ամբողջական ուսումնասիրության ենթարկել 1922-1936 թթ. Խորհրդային Հայաստանի սահմանային-տարածքային խնդիրները Խորհրդային Վրաստանի և Խորհրդային Ադրբեջանի հետ: Սահմանների ձևավորման հարցը, սահմանային-տարածքային տարաձայնությունները միայն վերջերս են սկսվել ուսումնասիրվել, և դեռևս ամբողջովին ու մանրամասն չեն լուսաբանվել, ուստի ուսումնասիրության հետազոտության օբյեկտը դարձել են հենց այս հարցերը: Ատենախոսությունում փորձել ենք հնարավորության սահմաններում լրացնել գոյություն ունեցող բացը, քանի որ այս խնդիրների

հիմնական մասը արմատապես ձգվում են դեպի անցյալ՝ հետևաբար դրանց ծագման պատճառները և ձևավորման առանձնահատկությունները ներկայացնելը կարող է հնարավորություն ընձեռել կարգավորելու ներկայումս առկա հակասությունները, հաշվի առնելով Ղարաբաղի հիմնախնդրի բարդ իրավիճակը, ինչպես նաև հայ-վրացական ներկայիս հարաբերությունները: Սույն ատենախոսությունը հիմնահարցի վերաբերյալ ամբողջական, հայ պատմագիտության տեսանկյունից ամփոփ ուսումնասիրություն ստեղծելու փորձն է, ուստի չափազանց կարևոր և արդիական նշանակություն ունի թե՛ պատմագիտական և թե՛ քաղաքական առումներով: Ատենախոսության գիտական նորույթի առումով ցանկանում ենք կարևորել այն հանգամանքը, որ փորձ ենք արել մերօրյա իրավիճակին համահունչ վերլուծել Հայաստանի սահմանային և տարածքային խնդիրները, ճշգրտել դրանց արդյունքում ձևավորված Հայաստանի սահմաններն ու դրանցում ընդգրկված տարածքները: Աշխատանքում օգտագործված նյութերի և աղբյուրների մեծ մասը ի մի են բերվել և գիտական շրջանառության մեջ են դրվել առաջին անգամ, որոնք հնարավորություն են ընձեռել ներկայացնել 1922-1936 թթ. Անդրկովկասյան Դաշնության Կենտրոնական գործադիր կոմիտեի և նրա տարբեր հանձնաժողովների կողմից սահմանային-տարածքային հարցերին վերաբերող որոշումները, Խորհրդային Հայաստանի տարածքային կորուստները՝ հօգուտ Ադրբեջանի և Վրաստանի կարգավորելու ընթացքը: Աշխատանքի գիտական նորույթի առումով ցանկանում ենք կարևորել նաև վերոնշյալ հանգամանքը, քանի որ հենց Անդրդաշնության Կենտրոնական գործադիր կոմիտեի նիստերի հենքի վրա ենք փորձ կատարել ճշգրտել Հայաստանի տարածքների ձևավորման ընթացքը: Աշխատանքի գիտական նորույթն է ապահովում նաև այն հանգամքը, որ ներկայացված են վիճելի շրջաններում գտնվող գյուղերի ներկայիս ճշգրիտ տեղագրությունը, ինչպես նաև վերափոխված՝ այժմյան անունները, որը հնարավորություն է ընձեռում պատկերացում ունենալու նորանկախ երեք հանրապետություններում դրանց գտնվելու վայրի մասին:

Ատենախոսության նպատակն ու խնդիրները: Ատենախոսության նպատակն է արխիվային վավերագրերի, մամուլի համապատասխան նյութերի, ժամանակի պետական ու հասարակական քաղաքական գործիչների հուշագրությունների, ինչպես նաև հրապարակում եղած առանձին ուսումնասիրությունների հենքի վրա անկողմնակալ կերպով ներկայացնել Անդրկովկասյան Դաշնության կազմում Խորհրդային Հայաստանի սահմանային-տարածքային խնդիրները Խորհրդային Ադրբեջանի և Խորհրդային Վրաստանի հետ: Ելնելով ատենախոսության նպատակներից մեր առջև դրել ենք հետևյալ խնդիրները.

- Կարճ ակնարկով ներկայացնել Խորհրդային Հայաստանի սահմանների ձևավորման ընթացքը Անդրկովկասյան Դաշնության կազմավորման ժամանակ
- Ուսումնասիրել 1922-1936 թթ. Ադրբեջանի և Վրաստանի հետ ունեցած սահմանային խնդիրների առաջացման պատճառներն ու հետևանքները, ինչպես նաև դրանց կարգավորման ուղղությամբ կատարված աշխատանքները:
- Լուսաբանել Խորհրդային Հայաստանի սահմանների փոփոխությունը և հնարավորինս ճշգրտել դրանցում ներառված տարածքները Անդրկովկասյան Դաշնության կազմում՝ 1922-1936 թթ.
- Անկողմնակալ կերպով քննական վերլուծության ենթարկել տարածքային կորուստների պատճառները, լուսաբանել թույլ տրված սխալներն ու թերությունները:

Ատենախոսության կիրառական նշանակությունը: Աշխատանքի մեջ ներկայացվող հիմնախնդիրները, մեկնաբանություններն ու եզրահանգումները կարող են օգտակար լինել դիվանագետներին՝ Ադրբեջանի և Վրաստանի հետ ներկայումս առկա խնդիրները կարգավորելիս, ինչպես նաև նշյալ ժամանակաշրջանին առնչվող ուսումնասիրողների հետազոտություններում և դասախոսություններում:

Ատենախոսության մեթոդաբանությունը: Ատենախոսությունը կատարվել է բազմաբնույթ փաստաթղթերի, նյութերի և գրականության հետազոտությունների հիման վրա, պատմահամեմատական և պատմաքննական մեթոդների կիրառմամբ, որը ենթադրում է փաստական նյութի ու պատմական իրադարձությունների բազմակողմանի քննական վերլուծություն, դրանից բխող համապատասխան եզրակացություններով: Սկզբնաղբյուրների և գրականության վերլուծությունը կատարվել է անկողմանկալ, գիտական բարեխղճությամբ՝ զերծ մնալով որևէ կողմնապահությունից: Եզրահանգումներն արվել են միայն փաստական նյութի հիման վրա:

Հետազոտության ժամանակագրական շրջանակները: Ատենախոսությունը ժամանակագրական առումով ընդգրկում է 1922-1936 թթ., սակայն առանձին դեպքերում կատարվել են որոշակի շեղումներ՝ իրադարձություններն առավել ամբողջական ներկայացնելու նպատակով:

Ատենախոսության փորձաքննությունը: Ատենախոսությունը քննարկել և հրապարակային պաշտպանության է ներկայացրել ԵՊՀ Հայոց պատմության ամբիոնը: Ատենախոսության հիմնական հարցադրումներն ու դրույթներն իրենց արտացոլումն են գտել հեղինակի հրատարակած երեք հոդվածներում:

Ատենախոսության աղբյուրագիտական հենքը և հիմնախնդրի ուսումնասիրության աստիճանը: Ատենախոսության շարադրման

ընթացքում օգտվել ենք Հայաստանի ազգային արխիվի մի շարք ֆոնդերից, որտեղ բազմաթիվ արժեքավոր տեղեկություններ են պարունակվում Հայաստանի սահմանային-տարածքային խնդիրների վերաբերյալ[1]: Աշխատանքում լուսաբանված են նաև թեմային վերաբերող Վրաստանի Ազգային արխիվում (այսուհետ՝ ՎԱԱ) պահվող նյութերը, որտեղից կարևոր են ֆ. 607-ում (Անդրկովկասյան Դաշնության Կենտրոնական գործադիր կոմիտե) պահվող վավերագրերը[2]:

Ատենախոսության աղբյուրագիտական հիմքը կազմում են նաև տպագիր փաստաթղթերի ժողովածուները, որոնցում տեղ են գտել միջազգային այն պայմանագրերը, որոնք վերաբերում են Հայաստանին, ինչպես նաև երկրամասային և հանրապետությունների կուսակցությունների ու խորհրդային մարմինների համագումարների, կոնֆերանսների, պլենումների որոշումները և բանաձևերը[3]:

Թեմայի ուսումնասիրության համար առաջնային կարևորություն ունեն նաև Անդրկովկասյան Դաշնության կազմավորման տարիներին ղեկավար գործիչների՝ Ալ. Մյասնիկյանի, Գ. Օրջոնիկիձեի, Մ. Օրախելաշվիլու, Ա. Մռավյանի, Ա. Բեկզադյանի և տվյալ ժամանակաշրջանի պետական-կուսակցական բազմաթիվ այլ գործիչների աշխատությունները, ճառերի, զեկուցումների ու հոդվածների ժողովածուները[4]: Այս

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1 g.2, գ., 5 g. 9 գ. 14, ֆ. 112, g. 1, գ. 95, գ. 143, գ. 168, գ. 228, գ. 267, գ. 280, գ. 551, գ. 681, g2, գ. 3, գ. 11, գ. 31, գ. 62, գ. 108, գ. 240, գ. 474, գ. 687, գ. 1405, գ. 1407, գ. 1412, g. 3, գ. 123, գ. 328, g. 8, գ. 44, գ. 58, գ. 66, գ. 96, գ. 116, Ֆ. 113, g. 1, գ. 866, g. 3, գ. 1, գ. 232, գ. 703, g. 43, գ. 568, ֆ. 114, g. 2, գ. 45, գ. 156, ֆ. 116, g. 3, գ. 52, ֆ. 1022, գ. 222:

[2] Ֆ. 607, g. 1, գ. 68, գ. 77, գ. 78, գ. 551, գ. 555, գ. 577, գ. 1311, գ. 1763, գ. 1765, գ. 2268, գ. 2270, գ. 2534, գ. 3341:

[3]Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923 թթ.,) պրոֆ. Ջ. Կիրակոսյանի խմբ., Երևան, 1972, Ազատյան Ա., Ճակատագրական պայմանագրեր, Երևան, 1998, Հայաստանի հանրապետությունը 1918-1920 թթ. (քաղաքական պատմություն), Գ. Գալոյանի խմբ., Երևան, 2000, Образоание Союза Советских Социалистических Республик, Москва, 1972, Образование СССР (1917-1924), сборник документов, Москва-Ленинград, 1942, Нагорный Карабах в 1918-1923 гг., Сборник документов и материалов, Ереван, 1992, Геноцид армян: ответственность Турции и обязательста мирового сообщества. Документы и комментарий, сост., Ю. Барсегов, т. 2, ч. 1, Москва, 2003.

[4]Տե՛ս Մյասնիկյան Ալ., Ընտիր երկեր, Երևան 1957, Մռավյան Ա., Հոդվածներ և ճառեր, 1913-1929, Երևան, 1961, Օրջոնիկիձե Գ., Ընտիր հոդվածներ և ճառեր 1918-1937, Երևան, 1950, Կասյան Ս., Ընտիր երկեր, Երևան, 1967, Բեկզադյան Ա., Նամակներ, հոդվածներ, փաստաթղթեր, Երևան, 1981, Լուկաշին Ս., Հոդվածներ, զեկուցումներ, ճառեր,, Երևան, 1986, Мясников А., О Закавказской федерации, Тифлис, 1925., Орахелашвили М., 10 лет Закавказской федерации, Тифлис, 1932, (նաև հայերեն,

աշխատությունները արժեքավոր են նրանով, նրանց հեղինակները ականատես և անմիջական մասնակցություն են ունեցել քննարկվող իրադարձություններին:

Խորհրդային շրջանի պատմաբաններից առանձնանում է վաստակաշատ պատմաբան Ս. Խարմանդարյանի աշխատությունները որտեղ շրջանառության մեջ դնելով արխիվային մեծաքանակ փաստաթղթեր, ինչպես նաև ժամանակի հայ մամուլը, բազմակողմանի ուսումնասիրված են 1921-1923 թվականներին երկրամասի քաղաքական և տնտեսական դրությունը, Անդրկովկասյան դաշնության և ԽՍՀՄ ձևավորման գործընթացները, խորհրդային հանրապետությունների փոխհարաբերությունները և այլ կարևոր հարցեր[5]:

Հետազոտվող ժամանակաշրջանի վերաբերյալ ստվար ուսումնասիրություններ են կատարվել նաև 20-րդ դարի 2-րդ կեսին, որոնց շարքում արժանահիշատակ են խորհրդային շրջանի կարկառուն պատմաբաններ՝ Վարդան Պարսամյանի և պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ծատուր Աղայանի աշխատությունները: Այս աշխատություններում նույնպես արժեքավոր տեղեկություններ են պարունակում Անդրդաշնության ստեղծման վերաբերյալ՝ հատուկ ընդգծելով և արժեվորելով այդ գործում Խորհրդային Ռուսաստանի և հատկապես Վ. Ի. Լենինի ունեցած դերը[6]:

Հիշատակության են արժանի նաև պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վլադիմիր Ղազախեցյանի աշխատությունները, որոնցից առաջինում[7], հեղինակը, օգտագործելով բազում փաստական տվյալներ, ներկայացրել է Անդրդաշնության պետական ղեկավար մարմինների ներգործությունը Հայաստանի տնտեսական կյանքի տարբեր ոլորտներում, իսկ երկրորդում[8]՝ նորահայտ արխիվային վավերագրերի հիման վրա նորովի լուսաբանվում են Խորհրդային Հայաստանի առաջին քսանամյակի պատմության հիմնահարցերը ժամանակակից պատմագրության տեսանկունից: Աշխատանքում տեղ են գտել մեր խնդրո հարցին առնչվող մի շարք արժեքավոր տեղեկություններ՝ խորհրդային իշխանության

Երևան, 1932), Мясников А., избранные произведения, Москва, 1985, Габисония Г. Н., К истории образования Закавказской федерации, Тифлис, 1931., Махарадзе Ф., Советы и борьба за советскую власть в Грузии 1917-1921, Тифлис, 1928.

[5]Տե՛ս Хармандарян С. В. Ленин и становление Закавказской федерации, Ереван 1969, Хармандарян С., Сплочение народов в строительстве социализма, Москва, 1982.

[6]Տե՛ս Պարսամյան Վ., Վ. Ի. Լենինը և Անդրկովկասյան ֆեդերացիան, Երևան, 1962, Агаян Ц., В. И. Ленин и создание Закавказской советской республики, Ереван, 1976, Агаян Ц., Вековая дружба народов Закавказья, Ереван, 1972.

[7]Տե՛ս Ղազախեցյան Վ., Սովետական Հայաստանի գյուղացիության պատմությունը (1929-1937), Երևան, 1978:

[8] Տե՛ս Ղազախեցյան Վ., Հայաստանը 1920-1940 թթ., Երևան, 2006:

հաստատումը Հայաստանում, Խորհրդային Հայաստանի տարածքային հիմնախնդիրները 1921 թ. դրությամբ, ինչպես նաև Խորհրդային հանրապետությունների փոխհարաբերությունները և այլ կարևոր հարցեր:

Խորհրդային շրջանում ժամանակաշրջանի վերաբերյալ հրատարակված աշխատություններից, կարելի է առանձնացնել Բ. Բորյանի Մ. Արզումանյանի, Ս. Կարապետյանի և Ա. Եսայանի աշխատությունները, որոնցում պատմական իրադարձություններն ներկայացված են անաչառորեն, ինչը տվյալ ժամանակաշրջանի համար շատ հազվադեպ երևույթ էր [9]:

Անդրկովկասյան դաշնության ձևավորման ուղղությամբ հայ ղեկավար գործիչների ունեցած դերն ուսումնասիրված է Հ. Կարապետյանի «Մեծ պայքարի մարդիկ» երկհատորյակում, Ս. Ամիրյանի «Ալեքսանդր Մյասնիկյան», Ա. Մնացականյանի «Ալեքսանդր Մյասնիկյան», աշխատություններում[10]:

Ատենախոսության հետ այս կամ այն չափով առնչվող իրադարձությունները լուսաբանելու տեսանկյունից կարևորել ենք նաև Վրաստանի և Ադրբեջանի պատմաբանների մի շարք աշխատություններ, որոնք թեպետ զերծ չեն որոշ թերություններից, իսկ առանձին դեպքերում հանդես են գալիս նաև պատմական փաստերի խեղաթյուրմամբ՝ դեպքերը և իրադարձությունները լուսաբանելով հիմնականում միակողմանի և ոչ ամբողջական, նախապատվությունը տալով ոչ թե պատմական դեպքերը և իրադարձությունը ճշմարիտ ներկայացնելուն, այլ՝ սեփական հանրապետության տեսանկյունը պաշտպանելուն, սակայն, այնուամենայնիվ, արժեքավոր տեղեկություններ են պարունակում խնդրո առարկա թեմայի վերաբերյալ[11]:

---

[9]Տե՛ս Борьян Б., Армения международная дипломатия и СССР, ч. II, Москва-Ленинград, 1929. Արզումանյան Մ., Արհավիրքից վերածնունդ, Երևան, 1973, Կարապետյան Ս., 1920 թ. հայ-թուրքական պատերազմը և Սովետական Ռուսաստանը, Երևան, 1965, Եսայան Ա., Հայաստանի միջազգային իրավական դրությունը (1920-1922), Երևան, 1967, նույնի՝ «Հայկական հարցը» և միջազգային դիվանագիտությունը, Երևան, 1985:

[10]Տե՛ս Կարապետյան Հ., Մեծ պայքարի մարդիկ, Գիրք առաջին, Երևան 1963, Գիրք երկրորդ, Երևան, 1967, Ամիրյան Ս., Ալեքսանդր Մյասնիկյան, Երևան, 1986, Մնացականյան Ա., Ալեքսանդր Մյասնիկյան, Երևան, 1955:

[11]Տե՛ս Габисония Г., К истории образования Закавказской федерации, Тифлис, 1931, Агаджанов М., Г. К. Орджоникидзе в борьбе за осуществление национальной политики Коммунистической партии в Закавказье (1921-1926 гг.), Тбилиси, 1960, Траскунов М., Подвиг во имя интернационализма, Тбилиси, 1979. Нифталиев И., Азербайджанская

Հայաստանի անկախության շրջանում հիմնահարցի նկատմամբ հետաքրքրությունը զգալի աճեց և այն կրկին գտնվեց պատմաբանների ուշադրության կենտրոնում և հրատարակվեցին տարածքային հարցերին առնչվող մի շարք աշխատություններ[12]: 1920-ական թվականների Հայաստանի տարածքային հիմնախնդրին է անդրադարձել նաև Ա. Հակոբյանը իր «Խորհրդային Հայաստանը Մոսկվայի և Կարսի պայմանագրերում» աշխատության մեջ, որտեղ բացի Մոսկվայի և Կարսի պայմանագրերից ներկայացված է նաև Ալեքսանդրապոլի պայմանգրի պատմությունը, որի արդյունքում հեղինակը կատարել է պայմանագրերի պատմաքննական ու համադրական վերլուծություն՝ հատուկ ուշադրություն դարձնելով տարածքային-սահմանային խնդիրներին[13]:

Հայ-վրացական 1918-1921 թթ. հարաբերությունները ուսումնասիրելու տեսանկյունից արժեքավոր տեղեկություններ են պարունակվում պպատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վանիկ Վիրաբյանի աշխատություններում, որտեղ հեղինակը հանգամանալից լուսաբանել է ինչպես 1918 թ. վրաց-հայկական պատերազմը, այնպես էլ Լոռու Չեզոք գոտու առաջացման պատճառները և հետևանքները[14]:

Չնայած ժամանակաշրջանի վերաբերյալ առկա հարուստ աղբյուրներին ու գրականությանը՝ հարկ ենք համարում փաստել, որ մեզ

СССР в экспансионистских планах армян (20-е годы XX века), Баку, 2010, Наджафов Б., Лицо врага, История армянского национализма в Закавказье в конце XIX-начале XX века, ч. II, Баку, 1994, Вердиева Х., Гусейн-Заде Рауф, “Родословная” армян и их миграция на Кавказ с Балкан, Баку, 2003., Махмудов Я., Азербайджан: Краткая история государственности, Баку, 2005., Гусейнзаде Р., Кавказ и армяне, Баку, 2014.

[12]Տե՛ս Խուրշուդյան Լ., Հայկական հարցը: Բովանդակությունը, ծագումը, պատմության հիմնական փուլերը, Երևան, 1995, Հարությունյան Հ., Լեռնային Ղարաբաղը 1918-1921 թթ., Երևան, 1996, Սիմոնյան Ա., Զանգեզուրի գոյամարտը (1920-1921 թթ.), Երևան, 2000, Խուրշուդյան Լ., Հայաստանի բաժանումը 1920 թվականին, Երևան, 2002, Խաչատրյան Կ., Հայ-ռուսական հարաբերությունները 1920-1922 թթ., Երևան, 2007, Զոհրաբյան Է., Նախիջևանի հիմնահարցը. 1920 թ. մայիս-1921 թ. հոկտեմբեր, Երևան, 2010:

[13]Տե՛ս Հակոբյան Ա., Խորհրդային Հայաստանը Մոսկվայի և Կարսի պայմանագրերում, Երևան, 2010:

[14]Տե՛ս Վիրաբյան Վ., 1918 թ. վրաց-հայկական պատերազմը, ՀՀ կառավարության ռազմաքաղաքական գործունեությունը և կուսակցությունները, Երևան, 2003, Հայ-վրացական ռազմաքաղաքական հարաբերությունները և Լոռու Չեզոք գոտին 1920-1921 թթ., Երևան, 2015, Հայ-վրացական ռազմաքաղաքական հարաբերությունները 1918-1921 թթ., Երևան, 2016:

առավելապես հետաքրքրող խնդիրների՝ Անդրկովկասյան Դաշնության տարիներին հանրապետությունների միջև առկա սահմանային-տարածքային հարցերի լուսաբանման վերաբերյալ գրականությունը սահմանափակ է: Այս հանգամանքը միանգամայն հասկանալի է, քանի որ Խորհրդային Միության տարիներին նախապատվությունը տրվում էր ավելի շատ հանրապետությունների միջև բարի դրացիական հարաբերություններին, ժողովուրդների միջև բարեկամության խաթարման դեմ ուղղված թեմաներին, ուստի սահմանային վեճերին վերաբերող հարցերի լուսաբանումը բնավ ողջունելի չէր:

Ատենախոսությունում լուսաբանվող հարցերը միայն վերջերս են դարձել առանձին ուսումնասիրության առարկա. ատենախոսությունն արդեն շարադրման փուլում էր, երբ լույս տեսավ խնդրո առարկա հիմնարացի վերաբերյալ Կարեն Խաչատրյանի, Համո Սուքիասյանի և Գեղամ Բադալյանի «Խորհրդային Հայաստանի և ԼՂԻՄ-ի տարածքային կորուստները 1920-1930-ական թվականներին» ուսումնասիրությունը[15]: Այստեղ բազմաթիվ արխիվային վավերագրերի հենքի վրա ներկայացված են Խորհրդային Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի տարածքային կորուստները 1920-1930-ական թվականներին: Ուսումնասիրությունում առկա փաստերն ու աղբյուրները շատ կարևոր հիմք են հանդիսացել մեր ատենախոսության համար:

Ատենախոսության կառուցվածքն ու բովանդակությունը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից, օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության ցանկից:

Ներածությունում հիմնավորված է ատենախոսության թեմայի արդիականությունը, ձևակերպված են հետազոտության նպատակը և խնդիրները, տրված է թեմային վերաբերող օգտագործված սկզբնաղբյուրների և օգտագործված գրականության տեսությունը:

Առաջին գլուխը՝ «Անդրկովկասյան Դաշնության ստեղծումը և Հայաստանը. Տարածքային սահմանային խնդիրների նախահիմքերը», ներառում է Անդրկովկասի Հանրապետությունների Դաշնության մեջ միավորման պատմական նախադրյալները, նպատակները և անհրաժեշտությունը: Մանրամասն լուսաբանված են Անդրկովկասյան Դաշնության ձևավորման ուղղությամբ կատարված աշխատանքները, Խորհրդային Հայաստանի համար Դաշնության ունեցած նշանակությունը պատմական տվյալ ժամանակաշրջանում, Հայաստանի ունեցած

[15]Տե՛ս Խաչատրյան Կ., Սուքիասյան Հ., Բադալյան Գ., Խորհրդային Հայաստանի և ԼՂԻՄ-ի տարածքային կորուստները 1920-1930-ական թվականներին, Երևան, 2015:

տարածքային խնդիրները մինչև Անդրդաշնության կազմավորումը: Անդրադարձ է կատարվել նաև 1921 թ. Մոսկվայի և Կարսի պայմանագրերին, որոնց ընթացքում պարզապես անտեսվեցին Խորհրդային Հայաստանի շահերը, և արդարացի փաստարկները, որի արդյունքում հայկական տարածքների զգալի մասը անցան Թուրքիային և Խորհրդային Ադրբեջանին: Հաստատված նոր սահմաններով Խորհրդային Հայաստանը հայտնվեց շատ անբերանպաստ իրավիճակում, և ինչպես Ա. Բեկզադյանն է Գ. Չիչերինին և Ի. Ստալինին ուղղված զեկուցագրում նշում, որ Հայաստանի երկու կարևոր կենտրոնները՝ Երևանն ու Ալեքսանդրապոլը դառնում են սահմանամերձ քաղաքներ, և Թուրքիայի հետ պատերազմի դեպքում այս երկու կարևորագույն քաղաքների պաշտպանությունը անհնարին է դառնում: Ուստի Ա. Բեկզադյանը եզրակացնում էր, որ այդպիսով Մոսկվայի պայմանագրով հաստատված Անդրկովկասի սահմանները Հայաստանի ինքնապաշտպանությունը գրեթե հավասարցնում են զրոյի, փոխարենը՝ Թուրքիայի համար ստեղծելով բարենպաստ իրավիճակ ներխուժման համար[16]:

Այնուհետև լուսաբանված են նաև երկրամասի միավորման տնտեսական հիմնավորումները, որտեղ առանձնակի կարևորություն ուներ երկաթգծի միավորման գործոնը, քանի որ այն հանրապետությունները միմյանց կապող միակ ճանապարհն էր և պետք է նպաստեր հանրապետությունների տնտեսությունների արագ աճին: Քննադատական մոտեցում է ցուցաբերվել այս և նմանատիպ այլ հիմնավորումներին, քանի որ դրանք ըստ էության մեկ նպատակ ունեին՝ հնարավորինս արագ միավորել Անդրկովկասյան հանրապետությունները, և չէին արտացոլում իրերի իրական վիճակը: Խոսվում է նաև տարածքային խնդիրների կարգավորման հավանական լուծումների մասին Անդրդաշնության կազմում:

Ատենախոսության երկրորդ գլուխը վերնագրված է «Հայ-ադրբեջանական սահմանային վեճերը»: Այստեղ մանրամասն շարադրված են Հայաստանի և Ադրբեջանի միջև առկա տարածքային-սահմանային վեճերը նախքան Անդրդաշնության կազմավորումը, անդրադարձ է կատարվե

[16]Տե՛ս Геноцид армян: Отвественность Турции и обязательства морового сообщества, документы и комментарий, Составитель Барсегов, Ю., т. 2, ч. 1, Москва, 2003, с. 459.

նաև Լեռնային Ղարաբաղի և Զանգեզուրի հիմնախնդիրներին: Խոսվում է 1921 թ. հուլիսի 5-ի Կովկասյան բյուրոյի արտահերթ նիստի որոշման մասին, որտեղ որոշվեց Ղարաբաղը թողնել Խորհրդային Ադրբեջանի կազմում՝ հիմնավորելով մուսուլմանների և հայերի ազգային խաղաղության և Վերին ու Ներքին Ղարաբաղների տնտեսական կապի անհրաժեշտությամբ, ինչպես նաև Անդրբեջանի հետ նրա մշտական կապից: Ղարաբաղին տրվեց մարզային լայն ինքնավարություն Շուշի կենտրոնով, որի արդյունքում Ադրբեջանի կոմկուսի կենտկոմին հանձնարարվեց որոշել Ղարաբաղի Ինքնավար մարզի սահմանները և ներկայացնել Կովկասյան բյուրոյի հաստատմանը[17]: Այնուհետև լուսաբանված են Լեռնային Ղարաբաղին ինքնավարություն տալու որոշման կատարման ուղղությամբ ձեռնարկված աշխատանքները, ինչպես նաև Խորհրդային Ադրբեջանի վարած խորամանկ քաղաքականությունը այդ որոշումը շրջանցելու ուղղությամբ, որոնք սակայն չեն պսակվում հաջողությամբ, քանի որ 1923 թ. հուլիսի 7-ին Անդրերկրկոմի հանձնարարությամբ Ադրբեջանի խորհուրդների ԿԳԿ նախագահությունն ընդունեց «Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզ» (ԼՂԻՄ) կազմավորելու մասին դեկրետը[18]: Դեկրետում ասվում էր, որ ազգային հալածանքի և անհավասարության, ազգային թշնամանքի և ժողովուրդների ատելության վերացման նպատակով Ադրբեջանի խորհուրդների Կենտգործկոմի նախագահությունը որոշեց Լեռնային Ղարաբաղի հայկական մասից կազմավորել Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզ Խանքենդի[19] կենտրոնով[20]:

Մանրամասն ներկայացված են Դաշնության շրջանակներում հայ-ադրբեջանական սահմանային գյուղերի միջև եղած խնդիրները, ինչպես նաև վիճելի շրջանների գյուղերի տեղագրությունը: Լուսաբանված են Խորհրդային Ադրբեջանի ունեցած հավակնությունները Խորհրդային Հայաստանի տարածքների նկատմամբ, որոնց նպատակն էր, որքան հնարավոր է շատ

---

[17]Տե՛ս К истории образования Нагорно-Карабахской Автономной области Азербайджанской СССР 1918-1925, документы и материалы, Баку, 1989, с. 12.

[18]Տե՛ս Маммадов И., Мусаев Т., Армяно-азербайджанский конфликт: История, право, посредничество, 2-ое издание, Баку, 2008, с. 35:

[19] Խանքենդ՝ գյուղ Ելիզավետպոլի նահանգի Շուշի գավառում, այժմ՝ Ստեփանակերտ, տե՛ս «Հայաստանի Հարակից Շրջանների Տեղանունների Բառարան», հ. 2, Դ-Կ, Երևան, 1988, էջ 656:

[20]Տե՛ս Нагорный Карабах в международном праве и мировой политике, с. 651.

տարածքներ կորզել Հայաստանից: Մանրամասն ուսումնասիրված և լուսաբանված են 1922-1936 թթ. ընթացքում սահմանային վեճերի ծագման պատճառները. այդ խնդիրների լուծման ուղղությամբ Անդրկենտգործկոմի իրականացրած աշխատանքները, նիստերում ընդունված որոշումները, որոնք հիմնականում հայանպաստ չէին, ինչպես նաև համեմատական վերլուծության են ենթարկվել Հայաստանի և Ադրբեջանի իշխանությունների վարած գործելաոճի էական տարբերությունները:

Ատենախոսության երրորդ գլխում, որը վերնագրված է «Հայ-վրացական սահմանային խնդիրները 1922-1936 թթ.» ներկայացված են հայ-վրացական սահմանային խնդիրները, կարճ անդրադարձ է կատարվել 1918 թ. երկու հանրապետությունների անկախության ժամանակաշրջանում տեղի ունեցող իրադարձություններին, մինչև Անդրկովկասյան Դաշնության ինքնալուծարումը՝ 1937 թ.: Մանրամասնորեն ուսումնասիրված է հայ-վրացական 1918 թ. պատերազմը, դրան հաջորդած 1919 թ. հունվարին հաշտության համաձայնագիրը, 1920 թ. Լոռու Չեզոք գոտում ծավալված իրադարձությունները, Չեզոք գոտու առաջացման պատճառները և հետևանքները, պատերազմի ընթացքում Վրաստանի վարած անհանդուրժողական և կոշտ քաղաքականությունը Հայաստանի նկատմամբ: Առանձնակի կարևորությամբ ներկայացված է 1921 թ. նոյեմբերի 6-ի հայ-վրացական սահմանագծման պայմանագիրը, որն ըստ էության հանդիսացավ Հայաստանի և Վրաստանի սահմանների հիմքը, քանի որ Անդրկովկասյան Դաշնության կազմում նրանց միջև գոյություն ունեցող սահմանային-տարածքային հետագա վեճերը հիմնականում կարգավորվում էին հենվելով այս պայմանագրի վրա, ավելին՝ այն գրեթե ճշգրիտ համապատասխանության մեջ է ներկայիս սահմանագծի հետ: Այս պայմանագրի համաձայն Խորհրդային Հայաստանի կազմում մնաց Լոռու տարածքը «այսպես կոչված անգլիական սահմաններում՝ Վորոնցովկայի, Պրիվոլնոյեի, Տափաստանի, Ալավերդու շրջանների հետ»[21]: Այնուհետև լուսաբանված են 1922-1936 թթ. Խորհրդային Վրաստանի տարածքային հավակնությունները Խորհրդային Հայաստանի տարածքների նկատմամբ: Մասնավորապես 1921 թ. նոյեմբերի 6-ի համաձայնագրի ստորագրումից կարճ ժամանակ անց Խորհրդային Վրաստանի հողժողկոմատը չբավարարվելով ձեռք բերածով, հարց բարձրացրեց, որ նշված

[21]Տե՛ս, Սահակյան Ա., նշվ., աշխ., 170-171:

համաձայնագրով հաստատված սահմաններով նախատեսված չէին երկու հանրապետությունների ո՛չ աշխարհագրական, ո՛չ տնտեսական, ո՛չ ազգագրական կողմերը, և խնդրեց սահմանները վերանայել: Այդ նպատակով Վրաստանի հողժողկոմատը Անդրկենտգործկոմին ներկայացրել էր սահմանագծի նոր նախագիծը՝ Լոք-Լալվարի լեռնաշղթայի ուղղությամբ[22]: Հայկական կողմը, սակայն, ի դեմս Անդրկենտգործկոմի նախագահ Ս. Համբարձումյանի, դեմ արտահայտվեց նոր սահմանագծմանը, քանի որ 1921 թ. նոյեմբերի 6-ի համաձայնագրի հիման վրա 1922 թ. սեպտեմբերի 7-ին Հայաստանի և Վրաստանի հողագործության ժողկոմները համաձայնության էին եկել Լոռու և Բորչալուի գավառների վերաբերյալ: Ըստ այդ համաձայնագրի՝ հայ-վրացական վիճելի տարածք համարվող Ախթալայի անտառատնտեսությունը, իսկ այնուհետև հոկտեմբերի 12-ին ստորագրված ակտով Չաթախի անտառաշերտը հանձնվել էին Հայաստանին:

Հետագա շարադրանքում նույնպես առանցքային ուշադրության կենտրոնում, բնականաբար, եղել են Խորհրդային Հայաստանի տարածքային կորուստներն ու ձեռքբերումները Վրաստանի հետ ունեցած տարաձայնությունների պատճառով:

Եզրակացությունում հանրագումարի բերելով հետազոտության հիմնական արդյունքները՝ նշվում է, որ

- 1918-1921 թթ. տեղի ունեցած դեպքերի և իրադարձությունների հետևանքով Խորհրդային Հայաստանի բազում տարածքները ապօրինաբար անցան Թուրքիային, Ադրբեջանին և Վրաստանին:
- Լոռու և Զանգեզուրի համառ պայքարից հետո միայն այս տարածքներն անցան Խորհրդային Հայաստանին, ուստի հանգում ենք այն եզրակացությանը, որ վիճելի մյուս շրջանների նկատմամբ էլ պետք էր դրսևորել կամային հատկանիշներ և անզիջում կեցվածք դրանք Խորհրդային Հայաստանի կազմում պահելու համար:
- Անդրկովկասյան Դաշնությունը ամբողջությամբ չլուծեց իր առջև դրված խնդիրները, հատկապես հանրապետությունների միջև տարածքային հակասությունները. դրանք պարբերաբար շարունակվում էին մինչև 1937 թ. և շարունակվում են առ այսօր:

[22] ՀԱԱ, ֆ. 112, ց. 8, գ. 96, թ. 6:

- 1922-1936 թթ. ընթացքում Խորհրդային Հայաստանը կրկին տարածքային զգալի կորուստներ ունեցավ, տարածքներ, որոնք անցան Խորհրդային Վրաստանին և Խորհրդային Ադրբեջանին:
- Անդրդաշնության գոյության տարիներին սահմանային խնդիրների լուծումը հաճախ անարդար էր և երբեմն նույնիսկ անտրամաբանական: Այդ խնդիրները լուծվում էին ելնելով այն հիմնական դրույթից, որ երեք հանրապետություններն անբաժան են լինելու և գտնվելու են միևնույն պետության կազմում: Այս համատեքստում Խորհրդային Հայաստանի իշխանությունները պատշաճ ուշադրություն չէին դարձնում սահմանային փոքր վեճերին. հաճախ դրանք դիտարկում էին ոչ թե որպես միջպետական խնդիրներ, այլ երկու գյուղերի միջև եղած հարցեր:
- Խորհրդային Հայաստանի իշխանությունները վարում էին չափազանց մեղմ և զգուշավոր քաղաքականություն սահմանային հիմնախնդրում, որի արդյունքում մեկը մյուսի հետևից կարևորագույն տարածքներ էին կորցնում:
- Տարածքային կորուստների հիմնական պատճառներից էր նաև այն, որ սահմանային խնդիրներով զբաղվող հողհանձնաժողովների նախագահությունը հիմնականում մե՛րթ վրացիների և մե՛րթ ադրբեջանցիների ձեռքում էր կենտրոնացած, որոնցից և ոչ մեկը բնականաբար շահագրգռված չէր, որպեսզի սահմանային խնդիրները լուծվեն հօգուտ Խորհրդային Հայաստանի:

Այսպիսով, եզրափակելով վերը նշված փաստերն ու իրադարձությունները, համադրելով դրանց առաջացման պատճառներն ու հետևանքները՝ հանգում ենք այն եզրակացությանը, որ սահմանային տարածքային խնդիրները լուծելիս պետք չէ ապավինել և հույս դնել երրորդ պետության վրա, քանի որ նրանցից յուրաքանչյուրը առաջնահերթ, բնականաբար, հետապնդում է իր շահը, իսկ այդ շահերի համադրությամբ, Հայաստանը չունենալով տնտեսական ռեսուրսներ, աշխարհագրական նպաստավոր դիրք, ինչպես նաև հզոր հովանավորներ շատ դեպքերում զիջողի դերում է հանդես գալիս: Ուստի սահմանների հարցը առաջին հերթին պետք է կարգավորել սեփական ուժերով, լինել վճռական, համախմբված, պահանջող, ամեն գնով պահել հողը, ինչպես դա անում են մեր հարևանները և հասնում հաջողության:

Ատենախոսության հիմնական բովանդակությունն արտացոլված է հեղինակի հետևյալ հոդվածներում.

1. Անդրկովկասյան Դաշնության կազմավորումը և Հայաստանը, «Պատմություն և մշակույթ» գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2016, էջ 311-317:
2. Հայ-ադրբեջանական սահմանային վեճերը 1922-1936 թթ., «Մեսրոպ Մաշտոց» համալսարանի «Լրատու», (գիտական հոդվածների պարբերական ժողովածու), Երևան, հրատ., 2017, էջ 175-182:
3. Հայ-վրացական սահմանային տարածքային վեճերը 1922-1936 թթ., «Էջմիածին» հանդես, N Դ, Էջմիածին, 2017, էջ 153-160:

Мурадян Нарек Михаилович

Погранично-территориальные споры Советской Армении в 1922-1936 гг.

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.01 „История Армении“

Защита состоится 18-ого июля 2017 г. в 14^{00}, на заседании специализированного совета по Истории Армении 004 ВАК РА при Институте истории Национальной Академии Наук РА (0019, Ереван, пр. Маршала Баграмяна 24/4).

Резюме

Диссертационная работа посвящена погранично-территориальным спорам Советской Армении в 1922-1936 гг. Диссертация состоит из введения, трех глав, заключения и списка использованной литературы.

Во **введении** обоснована актуальность изучаемой проблемы, необходимость проведения данного исследования, научная новизна, цели и задачи, степень ее разработанности, и практическое значение исследования.

В первой главе диссертации, которая называется «Создание Закавказской Федерации и Армения» представлены исторические предпосылки, цели и необходимость объединения Закавказских Республик в Федерацию. Детально рассмотрены проделанная работа по образованию Закавказской Федерации, значение Федерации для Советской Армении в данный исторический период, территориальные споры Армении до формирования Закавказской Федерации и их возможные решения в составе Федерации, а также предпосылки экономического соединения области, объединение экономик республик в одной системе.

Вторая глава диссертации называется «Армяно-азербайджанские пограничные споры в 1922-1936 гг.». В ней детально изложены территориально-пограничные споры между Арменией и Азербайджаном до формирования Закавказской

Федерации, ссылаясь на проблемы Нагорного Карабаха и Зангезура. Детально представлены проблемы армяно-азербайджанских приграничных деревень в рамках Федерации, а также топография деревень спорных районов. Детально изучены и представлены причины возникновения споров, работы, которые были проделаны Закавказским Центральным Исполнительным Коммитетом, решения принятые во время заседаний, которые в основном были не в пользу Армении, а также был сделан сравнительный анализ существенных различий поведения властей Армении и Азербайджана.

В третьей главе диссертации, которая называется «Армяно-грузинские пограничные проблемы в 1922-1936 гг.» были пресдтавлены армяно-грузинские пограничные проблемы коротко ссылаясь на события которые происходили в период независимости двух государств в 1918 году и до самоликвидации Закавказской федерации в 1937 году. Детально изучена армяно-грузинская война 1918 года, последующий ей мирный договор, подписанный в январе 1919 года, события, которые случились в нейтральной зоне Лоры 1920 года, причины возникновения нейтральной зоны и последствия, а также нетерпимое и жесткая политика Грузии по отношению Армении во время войны.

С особой важностью представлен армяно-грузинский демаркационный договор от 6 ноября 1921 года, который по сути стал основой границ между Арменией и Грузией, так как в составе Закавказской Федерации существующие между ними последующие территориально-пограничные споры в основном регулировались на основе этого договора, более того он почти совпадает с нынешней демаркацией границ.

В центре внимания естественно были потери и достижения Советской Армении в годы Закавказской Федерации в разногласиях с Грузией.

Диссертация завершается заключением, в котором обобщены основные результаты исследования.

MURADYAN NAREK MIKHAIL

BOUNDARY-TERRITORIAL DISPUTES OF SOVIET ARMENIA IN 1922-1936

Dissertation for the degree of the Doctor of History on the specialization of “History of Armenia" 07.00.01

The defense of the dissertation will be held on July 18, 2017, 14^{00} at the session of the Specialized Council 004 Armenian History of SQC RA by the Institute of History of the National Academy of Sciences of RA (0019, Yerevan, Marshal Baghramyan Avenue 24/4).

SUMMARY

The tesis is devoted to the boundary-territorial disputes of Soviet Armenia in 1922-1936

The introduction justifies the relevance of the problem in study, the need of this study, the scientific novelty, goals and objectives, the level of its elaboration, and the practical value of the study.

In the first chapter of thesis entitled “The creation of the Transcaucasian Federation and Armenia", is presented historical prerequisites, purposes and need to unite the Transcaucasian Republics in the Federation. In details it is illustrated works, which had been done for the formation of the Transcaucasian Federation, the meaning of the Federation for the Soviet Armenia in that historical period, the territorial claims of the Soviet Armenia till the formation of the Federation and their possible solutions in the Federation, as well as economic prerequisites of the unification of the region, and the unification of the economics of the rebuplics in the same system.

The second chapter of the thesis is called “Armenian-Azerbaijani border disputes in 1922-1936" It sets out in detail the territorial-border disputes between Armenia and Azerbaijan before the formation of the Transcaucasian Federation, referring to the problems of Nagorno-Karabakh and Zangezur.

In details it is presented Armenia-Azerbaijani border villages problems in the framework of Federation, as well as topography villages of the disputable regions. In details it is studied and illustrated the reasons of the cause of the dispute, works which had been done by the Central Executive Committee of the Transcaucasian Federation, the decisions accepted during the session, which basically were not in favour of Armenia, as well as comparative analysis had been done the differences of behaviour the authorities of Armenian and Azerbaijani authorities.

The third chapter of the thesis called “Armenian-Georgian border problems in 1922-1936" describes the Armenian-Georgian border issues, briefly referred to the events during the period of independence of both Republics in 1918 till Transcaucasian Federation self-liquidation in 1937.

In details it is studied Armenian-Georgian war of the 1918, peace aggreement of 1919, events which happened in the neutral zone of Lori of 1920 the reasons and results of the emergence of neutral zone, the intolerant and tough politics of Georgia towards Armenia.

It is presented with particular attention Armenian-Georgian demarcation agreement of November 6 1921, which has become a basis of the border between Armenia and Georgia, because in the framework of Transcaucasian Federation further territorial and border diputes between them mainly regulated on the basis of that agreement, more it almost matched with the present border.

In the center of the thesis were territorial losses and achievments of the Soviet Armenia in the discordance with Georgia.

The conclusion sums up the main findings of the PhD thesis.